

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի ուղերձը

Վերջին զանգի առթիվ

Սիրելի՛ շրջանավարտներ,

Շնորհավորում եմ ձեզ ձեր կյանքի ամենանշանակալից իրադարձություններից մեկի՝ վերջին զանգի առթիվ: Այսօր մարզի շուրջ 1500 պատանիներ ու աղջիկներ հրաժեշտ են տալիս հարազատ կրթօջախին և շուտով կմտնեն սպասումներով և ակնկալիքներով լի մեծ կյանք:

Այս հանդիսավոր օրը դուք կյանքի նոր էջ եք բացում, իսկ ձեզանից շատերն արդեն ընտրել են իրենց կայացման ու ինքնահաստատման ուղին:

Դպրոցն է էպպես նպաստում պետության արժանի քաղաքացու ձևավորմանը, ուստի, այս տոնական օրն առիթ է մեկ անգամ ևս խորհելու այսօրվա իրականության մեջ նրա տեղի ու դերի մասին: Դպրոցում, շնորհիվ շնորհաշատ ուսուցիչների, դուք ձեռք բերեցիք ոչ միայն նոր ու արդիական գիտելիքներ, այլև ձևավորվեցիք որպես անհատականություններ՝ սեփական աշխարհընկալումով ու ինքնուրույն մտածողությամբ:

Մեզ միշտ ոգևորելու են ձեր հաջողությունները, ու մենք հպարտանալու ենք ձեր նվաճած բարձունքներով, քանզի, վստահ եմ, դրանք ծառայելու են մեր ժողովրդի բարօրությանը, նպաստելու են մեր պետության հետագա զարգացմանը և հզորացմանը:

Համոզված եմ, որ դուք միշտ բարձր եք պահելու սյունեցու պատիվը, իսկ գեղեցիկ ավանդույթի վերածված տոնական այս օրվա հուշերը և ջերմությունը ուղեկցելու են ձեզ ամբողջ կյանքի ընթացքում:

Կրկին շնորհավորելով դպրոցն ավարտելու կապակցությամբ, մաղթում եմ տոնական տրամադրություն, լավատեսություն և ձեր առջև ծառայած խնդիրները լուծելու հաստատակամություն:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

24 մայիս 2013թ.